

նուրմ անձնական գործոցս պատ-
ճառաւ, եւ պատեհ առիթներու
մէջ հետամուտ եղած եմ տեղւոյս
Աղղային գործոց ընթացից մասին
բաւական որոշ գաղափար մը կազ-
մելու. սակայն, ինչդեմ մի գար-
մանաւ, խմբագիր, եթէ յայտնեմ
ձեզ թէ Ա. Պօլսեցւոց գործերու ե-
ղանակն շատ խրթին հանելուկ մը
թուեցաւ ինձ համար, զոր չկարո-
ղացայ դերթէ ամբողջովին լուծել
ցարդ. նախ, այնպէս թուեցաւ
ինձ թէ՛ կատարեալ անտարբերու-
թիւն մը կը տրեմ տեղւոյս Հայ հա-
տարակութեան մէջ, բայց քիչ յե-
տոյ, երբ ինչ ինչ խնդրոց մասին ա-
ւելի ստույգ տեղեկութիւններ քա-
ղիցի, յայնժամ ստիպուեցայ ուղ-
ղիկ սխալու եւ սա եղբայրացութեան
յանդեպայ թէ՛ Ա. Պօլսոյ մէջ գոր-
ծունէութիւն կայ. բայց լռին, տ-
եղի ծանր, բայց միշտ լաւ կը գոր-
ծեն աստ. տեղացիք առհասարակ
հեռաւոր են. ժողովականք ողջա-
միտ անձերէ կը բաղկանան, որք
լըծութենէ ու խոհմութենէ չեղի
չեն գիտեր բնաւ. Հայ ժողովուրդն
աստ կէս քաղաքակրթեալ վիճակ
մ'ունի, մեծաւ մասամբ բարեկրթ
ու ազնիւ կերեւին. ժողովուրդն առ-
հասարակ եկեղեցատէր է, բայց
փափագելի է որ ազգու քարոզներ
աւելի եւ տպաւորեն ժողովուրդեան
որտին մէջ այն սերն, որ այնքան
հազուադէպ կը դառնայ տակաւ
ամենուրեք. ցաւելով տեսայ որ ե-
րիտասարդութիւնն հոս ալ կեանք
չունի, դուրս կ'ապրի իրեն. պէտք
է մղում տալ անոր գէպ ի ազգո-
գուտ ձեռնարկներ. ինչո՞ւ վառվը-
ռուն երիտասարդն իւր ամբողջ պա-
րագոյ ժամերն երթայ անյնեւ արը-
ճարաններու անկիւնն նորտախա-
ղով կամ քարախաղով, երիտա-
սարդութիւնն ալ կրնայ իւր մեծ ու
կարեւոր բաժինն ունենալ յառաջա-
դիմութեան գործոց մէջ. ցաւալի
իրողութիւն մը չէ՞ արդեօք որ, այս-
քան երկար տարիներէ ի վեր վար-
ժարանաց համար քիւրա ու դրամ
վառնուելէ յետոյ, տակաւին ա սօր
Հայերէն լեզուն հասարակութեան
համար անհասկանալի լինի. թո՛ղ,
ուրեմն, ագ վառվըռն երիտա-
սարդներն փոխանակ իրենց հռան-
դէն արճարաններու անկիւններն
զանազան խաղերու յաջողութեանց
համար մարելու, Հայ լեզուն տա-
րածման նմաստելու միջոցներն ի
գործ դնելու ջանքն ունենան. լը-
սեցի թէ՛ քանիցս փորձեր եղեր են
ոմանց կողմանէ աւս մասին և յա-
ջողութիւն չեն ունեցեր. արիւն-
թիւն պէտք է ունենալ տոկաւու
համար. յուսահատութիւնը տկա-
րութեան արդիւնք է և անշուշտ
այդ տկարութեան յանձնառու չը
պիտի Ա. Պօլսոյ ազնիւ երիտասար-
դութիւնն:

Գիտեմ, խմբագիր, կը փափաքիք
որ աւելի երկարօրէն գրեմ ձեզ այս
մասին, բայց գիտե՞ք արդէն որ
բաղմաղբաղ վիճակս չը ներեր ինձ
երկարաբանել. ուստի ամսոյ 18
կերակէ առուր Աղղային հանդիսի
մը նկարագրութիւնն ևս համառօ-
տակի իմն ընելով՝ պիտի բաւակա-
նանամ առ այժմ:

Նախորդ կրկնակէ փետրուար 11
լսեցի թէ՛ տեղւոյս Արշակունեան
վարժարանի աշակերտաց կողմանէ
տրամախօսութիւն մը պիտի կա-
տարուի. նոյն օր անձնական գոր-

ծերով դրադեալ լինելով՝ ստիպեալ,
էի հակառակ փափաքանցս բա-
ցակցել, և իմ սոյն բացակայու-
թեանս համար շատ մեծ ցաւ ըզ-
գացի այն տոնն նա մոնտա՞նդ,
երբ ծանօթներս գովեստիք խօ-
սեցան կատարուած տրամախօսու-
թեան մասին, որ թատերախաղի
ձեւով պատրաստուած է եղեր.
Փետրվար 18 ի կիրակէ առաւօտ
էր, երբ եկեղեցի երթալու ատեն,
Աղղարարութիւն մը կարդացի,
որով յիշեալ տրամախօսութեան
կրկնութեան մասին ժողովուրդեան
կողմանէ տրտայտուած փափա-
քանցն համաձայն, իբր երկրորդ
անգամ, նոյն օր ևս կատարուի
կը ծանուցանէր թաղ. խորհուրդն.
չատ գո՛հ մնացի սոյն աղղարարու-
թենէն, զի անձնական գործերս կը
ներեին ինձ ներկայ լինել նոյն օր
սոյն վարժարանական հանդիսին,
ի ժամ ինն, բարեկամներէս միո՞ն
հա գնացինք յ'Արշ. վարժարան,
մոից տոմսերն ի ձեռնին, երկուս
խուռն լազմութեամբ մը լեցուած
էր վարժարանին սրահն. թատերա-
բեմ մը պատրաստուած էր անդ,
զոր գունաւոր վարագոյր մը կը
ծածկէր. սորա դիմացի կողմն,
գեղեցիկ չըջանակի մը մէջ ճաշա-
շարժ չօք եաշապեւտառութիւ-
նը գրուած էր. թատերաբեմին
առջևի կողմն շարուած էին երգե-
ցիկ մանկուքն ու աղջկուքն և Հայ
երիտասարդներէ կազմուած նուա-
գածուաց ընտիր խումբն. Սրահին
կարգապահութեան կ'հակէին Պատ.
թաղ. խորհրդոյ բարեկան անդամ-
ներն, ընդ որս և Յովսէփ աղա խա-
չէրեան, որ ազգ-աւորական եռան-
դեամբ թատերաբեմի պատրաս-
տութեան համար ևս հարկ եղած
բոլոր պիտոյքն ձրիարար հագացած
էր իւր թատրոնէն. Քիչ յետոյ
վիճակիս Գեր. Առաջնորդ Սրահան
Հայրն՝ Գաւառիս հասարակաց կըր-
թութեան տեսուչ Վսեմ. Սիւրու-
րի պէյի և Օսմ. կայս. գրամա-
տան Ա. Պօլսոյ ճիւղի Տնօրէն Միւ-
սիւ Միթուման Ֆառաճնի ու Պատկ.
Քաղաք. ժողովոյ անդամաց ընկե-
րակցութեամբ ներս մտաւ սրահէն,
երկու քահանայներէ չըջապատեալ
Նուագածուաց խումբն «Համիտի-
յէ» թաղերգն սկսաւ երգել, զոր
ամբողջ հանպիսակա՛նք. Առաջնորդ
Հօր առաջարկութեամբ, յոտնկայս
ունկնդրեցին. և սորա յաջորդեցին
երգեցիկ մանկանց ու աղջկանց
ներգաշնակ երգերն. Հետզհետէ
վեց վարագոյրներ բացուեցան որոց
վերջինն հովուի մը առանցքերէն
էր. «Տգեւոր և ուսումնասէր»
խորագրով հինգ արարուածէ բաղ-
կացեալ պարզ տաճկերէն լեզուաւ
թատերախաղ մ'էր, որուն գըլ-
խաւոր անձինքն էին երկու հայ-
րեր, մին ուսումնասէր և միւսն
ուսումնաստեաց. առաջինն երջանիկ
եղաւ իւր որդւով, իսկ երկրորդն
իւր որդւով թշուառութեան մէջ
ընկղմեցաւ. շատ հրահանգիչ էր
խաղն և գեղեցիկ կերպով պատ-
րաստուած, ազդուակի չ'լինելու
համար ալ մերթ կատակերգու-
թեամբ խառն. աշակերտք զարմա-
նալի յաջողակութեամբ կը կատա-
րէին իրենց գերերն, ծափահարու-
թիւնք գրեթէ անընդհատ կը յա-
րունակուէին. վերջին վարագոյրն
բացուեցաւ եւ ինը աշակերտ, ան-
ձինք թատերախաղին, առկերէն

երգ. մը երգեցին ու հետզհետէ եր-
կու աշակերտներ ալ հայերէն և ֆը-
ռանսերէն լեզուաւ. իրենց չնորհա-
կալութիւնն յայտնեցին ներկայից
վարագոյրն գոցուեցաւ և Գեր. Ա-
ռաջնորդ Ս. Հայրն տաճկերէն
լեզուաւ բարեկամութիւններ ը-
րաւ վաճառեցին կենաց մեր հայ-
րական միջոցներն, Նորին Օ-
գոստ. Սուլթան Ապտ-իւլ-Համիտ
խանի. Հանդէսն վերջացաւ ու
նուագածուաց խումբն վերստին
սկսաւ երգել «Համիտիյէ» թաղ-
երգն. շատ հետաքրքիր էինք սոյն
հանդիսին հեղինակին մասին, որ
անշուշտ ամբողջ ներկայացման տե-
ւողութեան միջոցին ներսն ըզբաղ-
եալ լինելով՝ չ'էր կրցած բնաւ ե-
րելիւ և ո՛հա, երբ անհամբեր կը
սպասէինք, թատերաբեմէն նիհար
երիտասարդ մը վար իջաւ. քրթնա-
թոր և ամբոխն ճեղքելով սկսաւ
յառաջանալ. բարեկամս փութաց
անմիջապէս ներկայացնել ինձ յիշ-
եալ երիտասարդն, որ Պէրպէրեան
վարժարանի շրջնաւարտներէն էր
Ֆէսլեան Սրտաշն ուսու. ամեն
աչք ի նա կը հայէին. յառաջացաւ
Ֆէսլեան էֆ. դէպ ի նախագահ Ս.
Հայրն ու նորա աշն առնելէ յետոյ,
սկսաւ Վսեմ. Սիւրուրի պէյի եւ
Միւսիւ Միթուման Ֆառաճնի շնոր-
հակալութիւններ յայտնել իւրեանց
պատուարեր ներկայութեամբ թէ՛
իրեն և թէ՛ իւր աշակերտաց խը-
րախոյս հանդիսանալուն համար
ջերմ շնորհակալութիւնք փոխա-
նակուեցան ընդ երկար և ի վերջոյ
Մեծ. խաչիկ էֆ. Հովուեան տրժա-
նալնտիր անդամ Պատկ. Քաղաք.
Ժողովոյ, երիտասարդ գոտատուն
համար խիստ պատուաբեր ներկա-
յացում մը ըրաւ յիշեալ էֆէնտի-
ներու, ի դիմաց Աղղին յայտնելով
նաև Ֆէսլեան էֆէնտի իւր ջերմ
շնորհակալութն. այս միջոցին աւելի
մօտեցած էի արդէն երիտասարդ
գոտատունն ու կը հրճուէի ահա-
նատես և ունկնդիր միանգամայն
լինելով այն քաղաքավարական ազ-
նիւ ձեւերուն ու շնորհակալութեան
տրտաւայտութեանց, որք անշուշտ
միակ վարժարութիւնն ու քաջա-
լերութիւնն կրնային համարուիլ
Արտաշէս էֆէնտի անդու ջանիցն
ի փոխարէն. հուսկ ապա վսեմ. Սիւ-
րուրի պէյ խիստ գո՛հ իւր բարձր
պաշտօնին իսկ պատուաբեր սոյն
յաջողութենէն, փափաքեցաւ գրել
թէ՛ հեղինակին և թէ՛ աշակերտաց
անուանքն (անշուշտ քաջալերական
ձեռնարկի մը նպատակաւ). «Հա-
միտիյէ» թաղերգն շարունակուե-
ցաւ մինչև որ հանդիսականք մեկ-
նեցան. ես եւս բարեկամիս հետ
մեկնեցայ, տխուր, սակայն, չկա-
րեալ ծանօթանալուս համար այն
ամբոխին մէջ Ֆէսլեան էֆէնտի
հետ. բայց օր մը, եթէ պատեհու-
թիւն ունենամ, մտադիր եմ վար-
ժարան և առաջնորդարան միան-
գամայն այցելելու և յայնժամ ան-
շուշտ պատիւն պիտի ունենամ առ-
սակցելու իւր հետ:

Կ'զգամ, խմբագիր, որ շատ եր-
կարաբանեցի, և թէն կը փափա-
քիմ սոյն ներկայացման բաղմաղի-
մի օգտակարութեանց ու ժող-
վրդեան վրայ ներգործած քաղց-
րիկ տպաւորութեան մասին ևս հա-
մառտակի իմն խօսիլ, բայց զայս
ևս ուրիշ առթիւ մը թողով կ'ընդ-
րեմ որ ներկայս բարեհաճիք հիւ-

րենկալել ձեր ազգօգուտ թերթե-
րէն միոյն մէջ,

20 փետր. 1890. ԱՆՑՈՐԴՆ

ԻԼՈՒ ՔԷՊԼԻՂԻ ԻԼՈՒՆԸ

Բուսիա տէվէթի թէպատրն-
տան Լազար Գօլափի իւր թէպապի
Տէվէթի Ալիեօտէն Գրիգոր Գա-
լէմբարեան միանէլէրնտէ ազատ
վէ թանգիւմ խորմիչ օլան 13 վէ
23 իլուլ 89 թարիխի մուգալէյէ-
նամէ մուհրապինճէ, մուսալէյի
Գրիգոր Գալէմբարեանն Լազար
Գօլափիէ ֆիրմի խմ իմ միչ օլուու-
ղու 3,400 ատէտ քէչի տէրսի իլէ
400տէն 500է գատար թէքէ տէ-
րիսի վաղ թը մուսլէնինտէ թէս-
լիւմ իալէմէմէնտէն առաւել, բէյ
նամըյալ ալմըչ օլուուղու 180 ա-
տէտ Սամանլի իրաւունքն մաֆաիկ
պալիկ օլուուղու 182 իրաւ 79 զըչ
իլէ իւհրէթի վէքեալէթ վէ մէտա-
րիֆի մուհաքէմէյի մալիւմէսինին
մուսալէյի Գրիգոր Գալէմբարեան-
տան պիթթաֆիլ Մ. Լազար Գօ-
լափիէ իթաֆ, վէ հիւնի իյֆաֆը-
նա տէկին բէէսիւմալէ պաշաճա
կիւղէյի երիւրտիլմէսի, վէ մէպ-
լաղը մէպալուրն թէմէմինի իսթիյ-
ֆաֆը իչիւն, միւտտաի ալէյի
մէրդում Գրիգոր Գալէմբարեան-
նըն Բուսիա վաքօր գումբանեա-
ղնտա մահճուղ օլան 9 ատէթ
պալեաւընն հալի օլուուղու մալըն
պիլմիլգաբէտէ ֆիրուիթըյալ, էս-
մանընտան տէյնին թէսվիյէսի,
վէ նօղսան գուհուր իտէր իսէ,
իսթ թարաֆը ելինէ միւտտաի
ալէյի թարաֆընտան իյֆա, վէ
ֆաղա գալըր իսէ, միւտտաի
ալէյի բէտտ վէ իթաֆը հալգըն-
տա, գապիլի իթիլաղ օլմադ իւզ-
րէ, պիրինճի մէճլիսի թիճարէթ-
տէն վէրիլմիչ օլան 16 ճէմաղիւ-
լաղը 307 վէ 23 քեանուր սանի
303 թարիլի վէ 278 նիւմէրօլու
պիր գըլմ իլամը զըբապի սուրէ-
թիւնին մուսալէյի Գրիգոր Գա-
լէմբարեանն ներէտէ օլուուղու
պիլինէմէտիկ ճիհէթլէ, ուսու-
լէն թէպիլի, տէվէթի միւշարի-
լէյիս աէֆարէթի ճանիպինտէն
պա թաղրի թալէպ վէ իլթիմա
զըլըմըչ, վէ միւսալէյի Գրիգոր
Գալէմբարեանն մահալի իլգամէ-
թի մէճհուլ օլմադ միւլպալէսիյ-
լէ ճանիպի մահքէմէտէն թան-
գիմ օլոււնան ճէլպ վարադասը տա-
լի, իլանէն իճրա խորմիչ օլուուղու
իլամը մէքըլըրտէ միւստէրիճ պու-
լուսմուչ օլուուղուտան, ուսուլը
մուհաքէմէյի թիճարէթ նիդամա-
մէսինին 20նճի մատտէսինին կինճի
ֆըրգասընա թէվֆիլգան, մէքըլը
սուրէթ, մուսալէյի Գրիգոր Գա-
լէմբարեանն թէպիլի օլոււմուչ
ատտ օլոււմաղ իւզրէ, մահքէմէյի
թիճարէթ իճրա տաեիրէսի տի
վանիսանէսինէ թաալիկ իտիլմէլէ
պէրապէր, թարիլի իլանտէն իթի-
պարէն 91 կիւն գարֆընտա, Գրի-
գոր Գալէմբարեանն մէվգըյի իճ-
րանէ միւրաճաթլա իսպալթը վի-
ճուտ իլմէսի, վէ իլմէտիկ
թաղ տիրտէ, սուրէթի իլամ քէն-
տիսինէ թէպիլի օլոււմուչ ատտըյ-
լա, հիւքմինին իճրաթ թապի օ-
լաճաղը իլանընա միւպատէրէթ
գըլընտը: